



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՆԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԾՈՒՄ • ՓՈՐՁ • ՅԱՆՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ

Ռեկտոր Կորյուն Աթոյանի շնորհավորանքը Երիտասարդության և Ուսանողության միջազգային տոների առիթով

Մի րեկտոր, ուսանողներ, շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության համաշխարհային և Ուսանողության միջազգային տոների առիթով, որոնք նշվում են նոյեմբերի 10-ին և 17-ին:

Երիտասարդությունը մարդու կյանքի ամենաստեղծարար, ամենալավատեսական ու ամենահամարձակ դրսևորումների ժամանակաշրջանն է, ինչը թույլ է տալիս լինել նախաձեռնող ու պայքարող, ստեղծագործող ու կառուցողական:

Դուք, հիրավի, այն հզոր ներուժն եք, որի հետ ավագ սերունդը կապում է մեր երկրի ու պետության վաղվա օրը: Բարձրագույն ուսումնական հաստատությունն էլ իր հերթին այն վայրն է, որտեղ այդ ներուժը երևան է գալիս բազմաբնույթ կերպով, քանզի կրթությունը և զարգացման մղումը ուսանողին զինում են նոր որակներով՝ հասունացնում գաղափարապես, օժտում մասնագիտական կարողություններով ու հմտություններով, միջանձնային հարաբերությունների փորձով:

Հպարտորեն կարող եմ ասել, որ ձեզ հետ ամեն հանդիպումը, զրույցը, քննարկումը, ձեր ուսումնական, գիտական, մարզական ու մշակութային ձեռքբերումներն ու հաջողությունները ամրապնդում են ձեր հանդեպ տաժաժ մեր հավատն ու հույսը, առավել իրատեսական դարձնում մեր սպասումները: Ուստի այս գեղեցիկ տոների առիթով ցանկանում եմ բարեմաղթել ձեզ լինել առողջ և առույգ, սովորող և ստեղծագործող, աշխատասեր ու արդարամիտ, բարի ու մարդասեր:

Թող որ անձնական երջանկությունն ու աշխատանքի բերկրանքը մշտապես տեղ ունենան ձեր կյանքում, և երիտասարդական ավյունն ուղեկցի ձեզ ամենուր:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ